ՄԱՅՐ ԱԹՈՌ-ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐ ՓԱԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԽՈՐԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈՎՎԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՀՏԴ 930
DOI: 10.56246/18294480-2023.15-19

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՔԱՆԱՔԱՐԱ
ԳՊՀ որակի ապահովման բաժնի
վարիչի ժամանակավոր պաշտոնակատար,
ԳՊՀ դասախոս
էլփոստ՝ q.hayrapetyan@gsu.am

Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի՝ Հայ առաքելական եկեղեցու հովվապետության տարիները (1932-1938թթ.) համընկավ հայ ժողովրդի պատմության դժվարին շրջափուլի հետ, երբ գագաթնակետին էին հասել ստալինյան բռնությունները, եկեղեցամերժ քաղաքականությունը: Այս պայմաններում Խորեն Ա կաթողիկոսը, կարևորելով Հայ առաքելական եկեղեցու դերը ազգապահպանման գործում, ինչպես նաև նկատի ունենալով, որ մայր հայրենիքում եկեղեցին քիչ-քիչ կորցնում էր իր հեղինակությունը, հանրային կյանքում դերակատարությունը, առաջնային պլան մղեց Սփյուռք-եկեղեցի-պետություն, առավելապես եկեղեցի-Սփյուռք, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին-նվիրապետական աթոռներ փոխհարաբերությունների կարգավորումը, Սփյուռքում հայ առաքելական եկեղեցու հեղինակության բարձրացման խնդիրը: Հետևաբար պատահական չէր 1934թ. Սփյուռքում հայրապետական նվիրակի պաշտոնի վերահաստատումը, նվիրապետական աթոռների՝ Երուսաղեմի, Կ. Պոլսի պատրարքությունների ու Կիլիկիո կաթողիկոսության ներգրավումը Հայ առաքելական եկեղեցու սահմանադրության մշակման աշխատանքներում, Սփյուռքում Աստվածաշնչի թարգմանության և հայ գրականության սկզբնավորման 1500-ամյա հոբելյանի մեծ շուքով տոնումը:

Արդյունքում կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանին հաջողվեց ոչ միայն ջերմ եղբայրական հարաբերություններ հաստատել Մայր Աթոռի և նվիրապետական աթոռների միջև, այլև աշխարհասփյուռ հայությանը և երեք նվիրապետական աթոռներին ամուր շաղկապել մայր հայրենիքի և Ս. Էջմիածնի հետ:

Ներկայացվող հոդվածն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական նշանակություն: Ներկա փուլում կրկին հայ առաքելական եկեղեցու առջև ծառացած օրակարգային հարցերից է Սփյուռք-եկեղեցի-պետություն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին-նվիրապետական աթոռներ փոխհարաբերությունների կարգավորումը: Հետևաբար անցյալի փորձի ուսումնասիրումն ու հետազոտումը հնարավորություն կստեղծի ոչ միայն վերը թվարկված հիմնախնդիրների կարգավորմանը միտված համապատասխան ուղենիշների մշակմանը, այլև առկա քաղաքական,

հանրային, կրոնական մարտահրավերներին դիմակայելու կարողությունների ձևավորմանը:

Բանալի բառեր՝ *Խորեն Մուրադբեկյան, նվիրապետական աթոռ, Երուսաղեմի հայոց պատրիարքություն, Կիլիկիո կաթողիկոսություն, կաթողիկոս, մյուռոն, փոխհարաբերություններ, Սփյուռք, հայրենիք:*

Խորեն Ա Մուրադբեկյանն իր հովվապետության տարիներին, ճիշտ գնահատելով Խորհրդային Հայաստանում տիրող քաղաքական իրավիճակը, ինչպես նաև բազմահազարանոց Սփյուռքի առկայությունը և նրա ներսում կուսակցական, գաղափարական պայքարի սրումը, կարևորում էր երեք նվիրապետական աթոռների՝ Կիլիկիո կաթողիկոսության, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքությունների հետ կապն ու համագործակցությունը՝ հանուն Հայ առաքելական եկեղեցու միասնության, աշխարհասփյուռ հայ համայնքի պաշտպանության և մեկ միասնական հայրենիքի՝ Խորհրդային Հայաստանի գիտակցության: Եվ պատահական չէր, որ Ամենայն հայոց կաթողիկոսն իր անդրանիկ կոնդակում ողջույնի և օրհնության խոսքեր էր հղում նվիրապետական աթոռների առաջնորդներին՝ շեշտելով, որ իր այս դժվարին առաքելությունում նա մենակ չէ, իր հույսն ու ապավենն են Կիլիկիո կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքությունները[1]:

Խորեն Ա Մուրադբեկյանի կաթողիկոսության տարիներին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսն էր Սահակ Բ Խապայանը, որը 1928թ. Կիլիկիայի կաթողիկոսության ամրապնդման համար իրեն աթոռակից կաթողիկոս է նշանակում Բաբկեն եպս. Կյուլեսերյանին[2]: Երուսաղեմի պատրիարքությունը 1931թ. հունիսի 16-ից առաջնորդում էր Թորգոմ արք. Գուշակյանը[3], որը, հավատարիմ մնալով Ամենայն հայոց կաթողիկոսության իշխանությանը, իր ամբողջ հոգևոր, հասարակական գործունեության ընթացքում նպատակ համարեց Մայր Աթոռի Սուրբ Էջմիածնի բարոյական, տնտեսական բարգավաճումն ու զարգացումը: Իրավամբ Թորգոմ արք. Գուշակյանը համարվում էր կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանի աջ ձեռքը, պաշտպանն ու ջատագովը Սփյուռքում:

---

[1] Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ, թղթ. 239, վավ. 293:

[2] **Հատիտյան Ա.**, Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Նվիրապետական աթոռները Տ. Խորեն Ա Կաթողիկոսի օրով», Էջմիածին, Ե, Ս. Էջմիածին, 1968, էջ 51: Տե՛ս նաև «**Ազդարար**», 2009, Թիւ 31, հոկտեմբերի 30, էջ 2:

[3] **Նույն տեղում,** էջ 57:

Ամենայն հայոց կաթողիկոսի և վերը նշված երկու նվիրապետական Աթոռների առաջնորդների միջև սերտ համագործակցության հիմքերը դրվել էին դեռևս վաղ անցյալում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ծառայության տարիներին: Նրանց կապը պայմանավորված չէր միայն եկեղեցական, հոգևոր պարտքի գիտակցումով, այլ նաև, ինչու չէ, ընկերական, բարոյական հիմունքներով: Խորեն Ա Մուրադբեկյանը, Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արք. Գուշակյանը և Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս Բաբկեն Կյուլեսերյանն օծակից ընկերներ էին[4]: Իրադարձությունների բերումով նրանց համագործակցությունն ավելի ամուր հիմքերի վրա դրվեց 1930թ.-ից, երբ Գևորգ Ե կաթողիկոսի մահից հետո Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և նրա նվիրյալ սպասավոր կաթողիկոսի տեղակալ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանն առավել ևս կարիք ունեին օգնության և օժանդակության:

Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը Խորեն արքեպիսկոպոսի՝ կաթողիկոսի տեղակալության շրջանի գործունեության մասին գրում է. «Մայր Աթոռո պատվական տեղակալը՝ տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեգյանը, որ բացի հոգելույս Տեր Գևորգ Ե-ի վերջին տարիներուն միջոցին հայտնաբերած իր արդյունավոր գործունեութենեն, անոր վախճանումեն հետո ևս, Աթոռո պարապության երկուուկես տարիներուն ընթացքին, լիովին արժեցուցած էր փորձ, կիրթ, գործունյա, ազգի և եկեղեցվո սիրով տոգորված և լավագույն ձեռնհասություններով օժտված հոգևորականի իր առավելությունները...»[5]:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի աթոռակից Բաբկեն Կյուլեսերյանը նույնպես անդրադարձել է իր օծակից ընկերոջ՝ Խորեն արքեպիսկոպոսի տեղակալության շրջանի գործունեությանը՝ նշելով, որ նա «...իր տեղակալի պաշտոնը կատարեց ձեռնհասորեն և վայելչությամբ՝ արժանանալով բովանդակ հայության վստահությանը, համակրանքին և հայրենի կառավարության սիրալիր ուշադրությանը»[6]:

---

[4] 1910 թ. սեպտեմբերի 19-ին, Վարագա Ս. Խաչի Բուն Բարեկենդանի կիրակի օրը, ձեռամբ Մատթեոս Բ Իզմիրլյանի, Խորեն վրդ. Մուրադբեկյանը ձեռնադրվում է եպիսկոպոս՝ օծակից ունենալով Մեծի Տանն Կիլիկիո Տ. Բաբկեն ապագա աթոռակից կաթողիկոսին, Երուսաղեմի Տ. Թորգոմ պատրիարքին: Տե՛ս **Վարուժան սրկ. Տերտերյան**, Անցյալի լուսավոր էջերից, Մուրադբեկյան Ամենայն հայոց կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը, Էջմիածին, Դ-Ե, Ս. Էջմիածին, 1994, էջ 70:

[5] **«Սիոն»,** 1932, թիվ 12, դեկտեմբեր, էջ 373:

[6] **Հատիտյան Ա.**, Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Խորեն Ա Կաթողիկոս Մուրադբեկյան (1932 նոյեմբեր-1938 ապրիլ)», Էջմիածին, Բ, Ս. Էջմիածին, 1968, էջ 21:

Թորգոմ Գուշակյանի և Բաբկեն Կյուլեսերյանի դրվատանքի խոսքերը միմիայն մի բանի մասին էին վկայում, որ նրանք անվերապահորեն վստահում էին Խորեն արք. Մուրադբեկյանին, բարձր գնահատում նրա հայրենանվեր աշխատանքը, երկար տարիների փորձը, կարևորում նրա դերն ու նշանակությունը աշխարհասփյուռ հայության համախմբման, ազգային ինքնության պահպանման գործում, և պատահական չէր, որ անմիջապես Խորեն արքեպիսկոպոսի կաթողիկոս ընտրվելուց հետո նրանք շնորհավորական նամակներում իրենց խոնարհումն ու հնազանդությունն են հայտնում նորընծա կաթողիկոսին՝ ճանաչելով Ամենայն հայոց կաթողիկոսության ավագությունը, գերիշխանությունը:

Ինչ վերաբերում է Կ. Պոլսի պատրիարքությանը, ապա 1927 թվականի հունիսի 26-ից այն առաջնորդում էր Մեսրոպ արք. Նարոյանը[7]: Խորեն Ա Մուրադբեկյանի կաթողիկոսության տարիների սակավ փաստաթղթերի և մամուլի ուսումնասիրությունը (բացի «Սիոն», «Հայ խոսնակ» հանդեսներից և մի քանի փոխադարձ նամակներից) հնարավորություն չտվեց ամբողջովին լուսաբանելու և նկարագրելու Մայր Աթոռի և Կ.Պոլսի պատրիարքության հարաբերությունները: Սակայն, ամբողջացնելով մեր ձեռքի տակ եղած տեղեկությունները՝ կարող ենք նշել, որ Կ. Պոլսի պատրիարքությունը 1920թ. քեմալական «միլլի» շարժումից հետո կաշկանդված էր. նոր կառավարությունը չեղյալ էր համարել «Ազգային սահմանադրությունը» և չէր ճանաչում Կ. Պոլսի պատրիարքությունը, այլ ձևական պահում էր պատրիարքարանը «բաշ-բաբազ» անվան տակ[8]: Եվ ինչպես գրում է «Սիոնը», «Թիւրքիոյ Հայոց Պատրիարքութիւնը սեղմուած է իր նուազագոյն աստիճանին մէջ»[9]: Բնականաբար նրա հարաբերությունները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ պետք է սահմանափակվեին քաղաքական անջրպետով, և կապը միմյանց հետ պահվում էր թույլատրելիության սահմանների մեջ:

Կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանն իր հովվապետության տարիներին երեք նվիրապետական աթոռների աջակցությամբ փորձեց լուծում տալ եկեղեցու համար առանձնակի կարևորություն ներկայացնող խնդիրներին,

---

[7] Արեւմտահայաստանի եւ Արեւմտահայութեան Հարցերու Ուսումնասիրութեան Կեդրոն http://akunq.net/am/?p=3452 մուտք՝ 26.03.2023թ.

[8] Տե՛ս **Հատիտյան Ա.,** Համառոտ ակնարկ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և նվիրապետական մյուս աթոռները Գևորգ Ե-ի օրով», Էջմիածին, Ա, Ս. Էջմիածին 1968, էջ 40:

[9] **«Սիոն»,** 1931, թիվ 7, հուլիս, էջ 217:

ինչպիսիք էին՝ Ս. Էջմիածնի անապահովվածության խնդիրը և Հայ եկեղեցու սահմանադրության բարեփոխումը՝ ժամանակի շնչին համապատասխան:

Ամենայն հայոց կաթողիկոսը, գիտակցելով, որ խորհրդային իշխանություններից որևէ նպաստ ստանալ չի կարող Մայր Աթոռի անապահով վիճակը թեթևացնելու հարցում, և հակառակը՝ իշխանությունները կանեն ամեն ինչ Հայ առաքելական եկեղեցին պառակտելու համար, որոշում է դիմել նվիրապետական աթոռներին և Սփյուռքին՝ Ս. Էջմիածնի կարիքները հոգալու և նրան արժանավայել դիրք ապահովելու համար[10]:

Ի պաշտպանություն և հոգածություն Ս. Էջմիածնի՝ շուտով ստացվում են Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոսի[11], եկեղեցական առաջնորդների[12] և առանձին անհատների[13] հայրենակցական միությունների հաղորդագրությունները Ս. Էջմիածնի համար կատարած դրամական հանգանակությունների և ապագայում կազմակերպվելիք օգնությունների մասին:

Այս առիթով Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ Գուշակյանը 1933թ. սեպտեմբերի 24-ին հանդես է գալիս «Լուսավորչի լուման» վերտառությամբ շրջաբերականով՝ ուղղված Երուսաղեմի հայ համայնքին, որի հիմնական նպատակն էր կազմակերպել համընդհանուր դրամահավաք՝ ի պաշտպանություն և ապահովություն Ս. Էջմիածնի[14]: Շրջաբերականում Թորգոմ արք. Գուշակյանը գրում է, որ կաթողիկոսն իր առաջին կոնդակում փափկանկատորեն չի խոսել Մայր Աթոռի սոցիալական ծանր վիճակի մասին, սակայն Հայաստանից ստացված պաշտոնական և մասնավոր տեղեկությունները վկայում են, որ Ս. Էջմիածինը գտնվում է անմխիթար ու անապահով վիճակում: Թորգոմ արք. Գուշակյանն այնուհետև շարունակում է՝ նշելով, որ Ս. Էջմիածինն արտասահմանում զրկված է դրամատներում պահված իր արժեթղթերից[15], իսկ Խորհրդային Հայաստանում զրկվել է նաև

---

[10] **Հատիտյան Ա.,** Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Տ. Խորեն Ա կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը», Էջմիածին, Գ, Ս. Էջմիածին, 1968, էջ 30:

[11] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոս ամենայն հայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938թթ.), կազմեց՝ **Բեհբուդյան Ս.,** Երևան, 1996, թիվ 230, էջ 366:

[12] Նույն տեղում, թիվ 250, էջ 383-384:

[13] Նույն տեղում, թիվ 251, էջ 384:

[14] **«Սիոն»,** 1933, թիվ 10, հոկտեմբեր, էջ 320-321:

[15] Արտասահմանյան դրամատներում պահվող Ս. Էջմիածնին պատկանող գումարների մասին հիշատակություն կա նաև ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի կողմից մեղադրյալ Բագրատ արք. Վարդազարյանի հարցաքննության արձանագրությունում: Ըստ Բագրատ արքեպիսկոպոսի վկայության՝ Խորեն

կալվածքներից և բոլոր տեսակի դրամական միջոցներից, հետևաբար Ս. Էջմիածինն առանց Սփյուռքի օգնության չի կարող հոգալ հոգևորականների կրթության, պաշտոնաթերթի հրատարակության և վանականների ապրուստի միջոցները: Թորգոմ արք. Գուշակյանը **«Եկեք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ»**[16] կարգախոսով կոչ է անում տարին մեկ անգամ կատարել հանգանակություն՝ ի փրկություն Ս. Էջմիածնի: Որոշ ժամանակ անց «Լուսավորչի լումա» բարեգործական ծրագիրը դուրս է գալիս Երուսաղեմի թեմի շրջանակից և լայն տարածում ստանում Սփյուռքում: Աշխարհասփյուռ հայությունը ջերմորեն ողջունում է նախաձեռնությունը, և յուրաքանչյուրն իր կարողություններին համապատասխան փորձում է իր նպաստը, լուման ունենալ հայ ժողովրդի հավատքի տան՝ Ս. Էջմիածնի պահպանության հարցում:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից ի վեր հայոց հովվապետերի համար առաջնային խնդիր էր դարձել Հայ առաքելական եկեղեցու բարեկարգության՝ նոր իրավակարգի պայմաններում եկեղեցու դիրքը ճշտելու հարցը: Խորեն Ա կաթողիկոսին նույնպես հուզում էր այս հարցը, և պատահական չէր, որ անմիջապես իր անդրանիկ կոնդակում անդրադարձ է կատարում հիշյալ խնդրին. «...կազմել զնոր սահմանադրութիւն, բարեկարգել և նորոգել զինացեալ սովորութիւնս եւ կարգս, որք կարօտին սրբագրութեան ըստ պահանջից և կարեաց նորոյ ժամանակի ի սահմանս իմաստուն խոհականութեան եւ զգուշութեան»[17]: Խորեն Ա կաթողիկոսը, հիմք ընդունելով Ազգային եկեղեցական ժողովի 1932թ. նոյեմբերի 11-ի որոշումը, Գերագույն հոգևոր խորհրդին հանձնարարում է կազմել հատուկ հանձնաժողով՝ հայոց ազգային եկեղեցու սահմանադրության նախագիծը մշակելու համար՝ հաշվի առնելով Կիլիկիայի կաթողիկոսության և Երուսաղեմի պատրիարքության կարծիքները[18]:

Սփյուռքում և առավել ևս Խորհրդային Հայաստանում տիրող ալեկոծությունների պատճառով Հայ առաքելական եկեղեցու բոլոր նվիրապետական

կաթողիկոսը դեռևս իր եպիսկոպոսության տարիներին գործուղվել է Եվրոպա և Ամերիկա, որտեղ դաշնակցական Հայաստանի համար հավաքել է մոտ 400 հազար դոլար և թողել ամերիկյան բանկում: Գումարը Հայաստանի խորհրդայնացման պատճառով հայրենիք տեղափոխել չի հաջողվել, այն հետագայում օգտագործում են դաշնակները՝ որպես դրամատերեր: Տե՛ս **Մանուկյան Ա.,** Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938թթ. /ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի/, Երևան, 1997, էջ 56:

[16]**.«Սիոն»,** 1933, թիվ 10, հոկտեմբեր, էջ 321:

[17] Մատենադարան, Կաթողիկոսական դիվանի ֆոնդ, թղթապանակ 239, վավերագիր 293:

[18] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Բ, թիվ 221, էջ 353-357:

աթոռների ու թեմերի մասնակցությամբ Ազգային եկեղեցական ժողով հրավիրելու հնարավորությունից զրկված Ամենայն հայոց կաթողիկոսը որոշում է կայացնում 1937թ. օգոստոսի 1-ի կոնդակով նախագծերը քննարկելու համար ուղարկել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսին, Երուսաղեմի ու Կ. Պոլսի հայոց պատրիարքներին, Խորհրդային Միության ու արտասահմանյան թեմերին[19]: Համաձայն կոնդակի՝ Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոսը նշանակվում է «որպես ներկայացուցիչ Մերում ի սփիւռս եւ ղեկաւար գործոյ»[20]:

Կաթողիկոսի կոնդակին ի պատասխան՝ ինչպես Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսը, այնպես էլ Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արք. Գուշակյանը հանդես են գալիս հրապարակումներով՝ քննարկելով և՛ Խորեն Ա կաթողիկոսի կոնդակը, և՛ Հայ առաքելական եկեղեցու սահմանադրության և բարեփոխումների նախագծերը: Կիլիկիո Սահակ Բ կաթողիկոսը գրում է. «Հայրենի օջախին քանդումը եւ մեր ժողովրդին ազգային աւանդութիւններէ ուծացումը, եւ կրուած տառապանքը աւելի եւս շեշտեցին կրօնական զգացումին պակասը անոր մէջ: ...Այս դարերէ ի վեր ազգային գոյութեան ու փրկութեան իբրեւ միջնաբերդ ծառայեց, այսօր լրջօրէն վտանգուած պէտք է նկատել, որովհետեւ օրէ օր թուլնալու վրայ է այն ազգային կապը, որ ժողովուրդ եւ եկեղեցի իրարու կը կապէր: Կրօնական հիւանդութեան ախտաճանաչումէն վերջ, կը մնայ ուսումնասիրել անոր ծնունդ տուող պատճառները, եւ սկսիլ դարմանումի»[21]:

Հայ առաքելական եկեղեցու բարեկարգության առիթով Երուսաղեմի պատրիարքության «Սիոն» ամսագիրը հանդես է գալիս ընդարձակ հրապարակմամբ՝ ներկայացնելով կաթողիկոսի 1937թ. օգոստոսի 1-ի կոնդակը, նրա աշխարհաբար թարգմանությունը և Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արք. Գուշակյանի վերլուծությունները «Բարեկարգութիւն հայ եկեղեցւոյ» վերտառությամբ հոդվածի տեսքով[22], որում պատրիարքը, մանրազնին քննելով խնդիրը, գրում է. «Բարեկարգութիւնը անհրաժեշտութիւն է թէ՛ իրականութեան և թէ՛ հասարակաց զգացման մեջ: Իսկ երկրորդը՝ սա ահարկու ճշմարտութիւնը թէ մեր եկեղեցւոյ հակառակորդները, ներսէ՛ն թէ

---

[19] Նույն տեղում, թիվ 372, էջ 526-528:

[20] Նույն տեղում:

[21] **Կերտող Ս.,** Հայ եկեղեցու բարեկարգության խնդրի շուրջ, Էջմիածին, Ժ-Բ, Ս. Էջմիածին, 2010, էջ 33:

[22] **«Սիոն»,** 1937, թիվ 10, հոկտեմբեր, էջ 294-307:

դուրսէն, մօտէ՛ն թէ հեռուէն, իրենց համար ամենէն յարմար ժամանակը նկատած են ներկան՝ վատուժած կարծուած հաստատութեան մը դէմ լարելու համար իրենց հնարքներուն ամբողջ սարուածքը:

Ատոր համար ահա անհրաժեշտ է բարեկարգութիւնը թէ՛ եղած եւ ըզգացուած պէտքին գոհացում տալու և թէ՛ դարանամտութեանց դիմադրել կարենալու համար»[23]:

Ցավոք, Խորհրդային Հայաստանում ստալինյան բռնաճնշումների պատճառով Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ իշխանությունների որդեգրած բացահայտ սահմանափակումների ու հետապնդումների պայմաններում Խորեն կաթողիկոսի հովվապետության տարիներին այդպես էլ հնարավոր չեղավ իրականություն դարձնել Հայ առաքելական եկեղեցու նոր սահմանադրության և բարեկարգության վերջնական ծրագրի հաստատումն ու կենսագործումը:

Ամենայն հայոց կաթողիկոսը, Մայր Աթոռի և երեք նվիրապետական աթոռների համագործակցությունն ավելի արդյունավետ հիմքերի վրա դնելու և ի նպաստ հայ ժողովրդի ծառայեցնելու համար, ինչպես նաև Սփյուռքում հայ համայնքի շրջանում տիրող ներկուսակցական պայքարի պատճառով[24] ստեղծված անկայուն իրավիճակից ելնելով, 1934 թվականի հուլիսի 20-ի սրբատառ կոնդակով Սփյուռքում վերահաստատում է հայրապետական նվիրակի պաշտոնը՝ իբրև կաթողիկոսի լիազոր ներկայացուցիչ այդ պաշտոնում նշանակելով Գարեգին արք. Հովսեփյանին[25]:

1935թ. հունվարին խորհրդային իշխանությունների թույլտվությամբ հայրապետական նվիրակ Գարեգին արք. Հովսեփյանը վերջապես կարողանում է մեկնել արտասահման:

---

[23] Նույն տեղում, էջ 298:

[24] 1933 թ. վերջին Սփյուռքում ալեկոծվում է հայ ազգային-եկեղեցական կյանքը: Կուսակցական, կրոնական տարաձայնությունները և հակախորհրդային տրամադրվածությունը պառակտում էր ոչ միայն հայ համայնքը, այլև եկեղեցին: Սփյուռքում պառակտումը սկսվեց ԱՄՆ-ից, որտեղ հայ համայնքը բաժանվել էր «Հին դպրոցի» և «Նոր դպրոցի» ներկայացուցիչների: Առաջինին հարում էին հիմնականում դաշնակցականները, երկրորդին՝ հնչակյանները և խորհրդամետ ներկայացուցիչները՝ հանձին Ամերիկայի հայոց թեմի առաջնորդ Ղևոնդ արք. Դուրյանի: Սփյուռքում ալեկոծությունների գագաթնակետն է դառնում 1933 թ. դեկտեմբերի 24-ին քաղաքական և կրոնական տարաձայնությունների հողի վրա դաշնակցականների կողմից Ղևոնդ արք. Դուրյանի սպանությունը: Տե՛ս **«Ազդակ»,** 1933, թիվ 207, դեկտեմբերի 30, էջ 1:

[25] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Բ, թիվ 270, էջ 408-410: **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 478: **Мелконян Э.,** Армянская апостольская церковь во взаимоотношениях Армении и Диаспоры, Религия и политика на Кавказе, Материалы международной конференции, Ереван, 2004, стр. 34.

Հայոց կաթողիկոսի նվիրակ Գարեգին արք. Հովսեփյանը Ս. Էջմիածնի և նվիրապետական աթոռների միությունն ու համագործակցությունը հաստատուն պահելու, Սփյուռքի ազգային-եկեղեցական կյանքում խաղաղություն և ներդաշնակություն հաստատելու առաքելությամբ 1935թ. աշնանը պաշտոնական այցով այցելում է նախ Երուսաղեմ[26], այնուհետև դեկտեմբերի 9-ին՝ Անթիլիաս, հանդիպում Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արք. Գուշակյանի, Կիլիկիո Սահակ և Բաբկեն կաթողիկոսների հետ[27]:

Կաթողիկոսի լիազոր-նվիրակը մասնակցում է 1936 թվականի մարտի 29-ին Անթիլիասում մյուռոնօրհնեքի հանդիսությանը, որի ժամանակ, որպես վկայություն Ս. Էջմիածնի և երեք նվիրապետական աթոռների միասնության, ջերմ ու բարեկամական հարաբերությունների, Կիլիկիո կաթողիկոսի աթոռակից Բաբկեն կաթողիկոսը նոր մյուռոնի մեջ խառնում է Սուրբ Էջմիածնից Ղազար Ջահկեցու (1737-1751թթ.), Եփրեմ Ձորագեղցու (1810-1835թթ.) և Գևորգ Ե-ի (1911-1930թթ.) մյուռոնները՝ որպես մեկ ընդհանրության խորհրդանիշ:

Բաբկեն կաթողիկոսն իր նոր օրհնած սուրբ մյուռոնից փոքր սրվակով նվեր է ուղարկում Սուրբ Էջմիածին Ամենայն հայոց կաթողիկոսին, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքներին՝ ի նշան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և երեք նվիրապետական աթոռների եղբայրության, սիրո և համերաշխության[28]:

Մայր Աթոռ-երեք նվիրապետական աթոռներ ջերմ, բարեկամական հարաբերություններին ի շարունակություն համատեղ ազգային, մշակութային, գիտական միջոցառումների իրականացումն էր: 1934 թվականին լրանում է Աստվածաշնչի հայերեն թարգմանության և հայ գրականության սկզբնավորման 1500-ամյակը: Ամենայն հայոց կաթողիկոսը, նկատի առնելով հայ ժողովրդի մշակույթի և պատմության համար այս երկու իրողությունների դերն ու նշանակությունը, ինչպես նաև օտարության մեջ ապրող սփյուռքահայությանը ձուլման վտանգից փրկելու առաքելությունը, նրա ազգային ինքնագիտակցությունն ու ազգային ոգու պահպանումը, որոշում է երեք նվիրապետական աթոռների անմիջական աջակցությամբ Սփյուռքում մեծ շուքով տոնել Աստվածաշնչի թարգմանության և հայ գրականության սկզբնավոր-

---

[26] **«Սիոն»,** 1935, թիվ 12, դեկտեմբեր, էջ 395:

[27] **«Հասկ»,** 1935, թիւ 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 143-144:

[28] **Հատիտյան Ա.**, Համառոտ ակնարկ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Նվիրապետական աթոռները Տ. Խորեն Ա կաթողիկոսի օրով», էջ 53:

ման 1500-ամյա հոբելյանը՝ որպես հայ մշակույթի մեծ ու համազգային տոն[29]: Կաթողիկոսի կոնդակով 1934 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 1935 թվականի հոկտեմբերի 1-ը հայտարարվում է հոբելյանական՝ Սուրբ Գրքի թարգմանության տարի[30]:

Կաթողիկոսի կոնդակի համաձայն՝ Սփյուռքում Աստվածաշնչի թարգմանության և հայ գրականության սկզբնավորման 1500-ամյա հոբելյանը մեծ շուքով կազմակերպելու համար Մայր Աթոռին նվիրյալ Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արք. Գուշակյանին կարգում է հայրապետական ներկայացուցիչ և ապագա ընտրվելիք կենտրոնական հանձնաժողովի նախագահ, որտեղ իրենց ներկայացուցիչները պետք է ունենային նաև Կիլիկիայի կաթողիկոսը և Կ.Պոլսի պատրիարքը[31]: Թորգոմ արքեպիսկոպոսը սիրով ստանձնում է իր վրա դրված պարտականությունը և այդ առիթով հանդես գալիս շրջաբերականով՝ մանրամասնություններ ներկայացնելով այն միջոցառումների վերաբերյալ, որոնք նախատեսվում էին հոբելյանական տարվա համար[32]:

Ցավոք, խորհրդային իշխանությունների կողմից եկեղեցու հանդեպ ոչ բարյացակամ դիրքորոշման պատճառով Աստվածաշնչի թարգմանության և հայ գրականության սկզբնավորման 1500-ամյա հոբելյանը մեծ արձագանք չի գտնում Խորհրդային Միությունում, փոխարենը այն մեծ հաջողությամբ և ցնծությամբ նշվում է Սփյուռքում՝ իր շուրջ համախմբելով սփյուռքահայ գրական, հասարակական, մշակութային գործիչներին[33]: Կաթողիկոսի կողմից հայտարարված հոբելյանական տարվա փակման արարողությունը կատարվում է Փարիզում՝ Սորբոնի համալսարանի մեծ դահլիճում, Գարեգին արք. Հովսեփյանի նախագահությամբ տեղի ունեցող փառավոր հանդիսությամբ[34]: Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արք. Գուշակյանի մեծ նվիրումն այս միջոցառման կամակերպմանը և մինչ այդ Մայր Աթոռին հա-

---

[29] **Հատիտյան Ա.**, Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Տ. Խորեն Ա կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը», էջ 33:

[30] Նույն տեղում:

[31] Նույն տեղում, թիվ 282, 283, էջ 422-423:

[32] **«Սիոն»,** 1934, թիվ 12, դեկտեմբեր, էջ 364-367:

[33] Մանրամասն տե՛ս Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, թիվ 2290, էջ 431-432: **«Հայ մամուլ»,** 1935, թիվ 37, հուլիսի 28, էջ 3, 1935, թիվ 12, փետրվար 3, էջ 2: **«Սիոն»,** 1934, թիվ 11, նոյեմբեր, էջ 360-362: **«Բազմավէպ»,** 1935, թիվ 9-12, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 289-291: **«Հայ Խօսնակ»,** 1935, թիվ 1-2, հունվար-փետրվար, էջ 3-4:

[34] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, թիվ 323, 283, էջ 471-472:

վատարմաբար ծառայությունն աննկատ չի մնում: Ամենայն հայոց կաթողիկոսը 1936 թվականի հոկտեմբերի 10-ին Թորգոմ արքեպիսկոպոսին պատվում է Գրիգոր Լուսավորչի շքանշանի[35] առաջին կարգի ականակուռ խաչով[36]:

Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանն իր հովվապետության տարիներին, ի սպաս հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու միասնության, աշխատում էր ավելի ամրապնդել և սերտացնել գոյություն ունեցող եկեղեցական, բարոյական-հոգևոր կապերն ու հարաբերությունները, համագործակցությունն ու միությունը նվիրապետական երեք աթոռների հետ ինչպես ակտիվ նամակագրությամբ, կոնդակներով, այնպես էլ կաթողիկոսի նվիրակի միջոցով կենդանի շփումներով, ինչն անկասկած կշարունակվեր: Ցավոք, մինչև 1939թ. այրիանում է ոչ միայն Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, այլև Կիլիկիայի և Երուսաղեմի նվիրապետական աթոռները՝ 1936 թվականի հուլիսի 9-ին մահանում է Կիլիկիո կաթողիկոսի աթոռակից Բաբկեն Կյոլեսերյանը, 1938 թվականի ապրիլի 5-ի լույս 6-ի գիշերը ցայսօր չպարզաբանված հանգամանքներում մահանում է Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա Մուրադբեկյանը, 1939 թվականի փետրվարի 10-ին՝ Երուսաղեմի պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանը, 1939 թվականի հոկտեմբերի 8-ին՝ Կիլիկիո կաթողիկոս Սահակ Խապայանը:

Օգագործված գրականության ցանկ

<u>Արխիվային սկզբնաղբյուրներ</u>

ա) Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1. Կաթողիկոսական դիվանի ֆոնդ

թղթ. 239, վավ. 293:

Տպագիր սկզբնաղբյուրների, փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ

1. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոս ամենայն հայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938թթ.), կազմեց՝ **Բեհբուդյան Ս.,** Երևան, 1996, 624 էջ:

---

[35] «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը շնորհվել է Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից հայ ժողովրդի կյանքում մեծ ավանդ ունեցող անձանց: Սահմանվել է Գևորգ Ե կաթողիկոսի կողմից Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին, ունեցել է երեք աստիճան՝ Ա, Բ, Գ: Խորեն Ա կաթողիկոսը 1935 թ. մասնակի փոփոխության է ենթարկում շքանշանը՝ «Ե տառի փոխարեն դնել տալով Լ», որով հապավումը դառնում է Գ Լ՝ Գրիգոր Լուսավորիչ: Ավելի մանրամասն տե՛ս **Վիրաբյան Ա.,** Հայ եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը, Էջմիածին, Թ, Ս. Էջմիածին, 2006, էջ 122-133:

[36] **Ապլոճյան Ա.**, Թորգոմ պատրիարք Գուշակյան, Կահիրե, 1940, էջ 669:

Աշխատություններ

1. **Ապլոճյան Ա.**, Թորգոմ պատրիարք Գուշակյան, Կահիրե, 1940, 710 էջ:

2. **Մանուկյան Ա.,** Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938 թթ. /ըստ ՊԱԿ-ի փաստաթղթերի/, Երևան, 1997, 280 էջ:

Հոդվածներ

1. **Կերտող Ս.,** Հայ եկեղեցու բարեկարգության խնդրի շուրջ, Էջմիածին, Ժ-Բ, Ս. Էջմիածին, 2010, էջ 14-35:

2. **Հատիտյան Ա.,** Համառոտ ակնարկ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և նվիրապետական մյուս աթոռները Գևորգ Ե-ի օրով», Էջմիածին, Ա, Ս. Էջմիածին 1968, էջ 32-42:

3. **Հատիտյան Ա.**, Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Խորեն Ա Կաթողիկոս Մուրադբեկյան (1932 նոյեմբեր-1938 ապրիլ)», Էջմիածին, Բ, Ս. Էջմիածին, 1968, էջ 21-32:

4. **Հատիտյան Ա.,** Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Տ. Խորեն Ա կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը», Էջմիածին, Գ, Ս. Էջմիածին, 1968, էջ 28-35:

5. **Հատիտյան Ա.**, Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.) «Նվիրապետական աթոռները Տ. Խորեն Ա Կաթողիկոսի որով», Էջմիածին, Ե, Ս. Էջմիածին, 1968, էջ 50-58:

6. **Վիրաբյան Ա.,** Հայ եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը, Էջմիածին, Թ, Ս. Էջմիածին, 2006, էջ 122-133:

7. **Վարուժան սրկ. Տերտերյան**, Անցյալի լուսավոր էջերից, Մուրադբեկյան Ամենայն հայոց կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը, Էջմիածին, Դ-Ե, Ս. Էջմիածին, 1994, էջ 68-86:

բ) ռուսերեն

1. **Мелконян Э.,** Армянская апостольская церковь во взаимоотношениях Армении и Диаспоры, Религия и политика на Кавказе, Материалы международной конференции, Ереван, 2004, с. 31-52.

Պարբերական մամուլ

Ամսագրեր, պարբերական հրատարակություններ, թերթեր

1. «**Ազդարար**», 2009, Թիւ 31, հոկտեմբերի 30:
2. **«Ազդակ»,** 1933, թիվ 207, դեկտեմբերի 30:
3. **«Բազմավէպ»,** 1935, թիվ 9-12, սեպտեմբեր-դեկտեմբեր:
4. **«Հայ մամուլ»,** 1935, թիվ 37, հուլիսի 28: 1935, թիվ 12, փետրվար 3:
5. **«Հայ Խօսնակ»,** 1935, թիվ 1-2, հունվար-փետրվար:
6. **«Հասկ»,** 1935, թիւ 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր:
7. **«Սիոն»,** 1931, թիվ 7, հուլիս:
8. **«Սիոն»,** 1932, թիվ 12, դեկտեմբեր:
9. **«Սիոն»,** 1933, թիվ 10, հոկտեմբեր:
10. **«Սիոն»,** 1934, թիվ 11, նոյեմբեր:
11. **«Սիոն»,** 1934, թիվ 12, դեկտեմբեր:
12. **«Սիոն»,** 1935, թիվ 12, դեկտեմբեր:

13. **«Սիոն»,** 1937, թիվ 10, հոկտեմբեր:
Էլեկտրոնային հրապարակումներ
Արեւմտահայաստանի եւ Արեւմտահայութեան Հարցերու Ուսումնասիրութեան Կեդրոն http://akunq.net/am/?p=3452 մուտք՝ 26.03.2023թ.

THE RELATIONS OF MOTHER SEE AND PATRIARCHAL SEES DURING THE PASTORAL YEARS OF THE CATHOLICOS OF ALL ARMENIANS - KHOREN I

HAYRAPETYAN KANAKARA
Acting Head of Quality Assurance Department
Lecturer of GSU
e-mail: q.hayrapetyan@gsu.am

The pastoral years of Catholicos of All Armenians Khoren I Muradbekyan (1932-1938), coincided with a difficult period in the history of the Armenian people, when Stalin violence and anti-church politics reached their peak.

In these conditions, Catholicos Khoren I, emphasizing the role of the Armenian Apostolic Church in the preservation of the nation, as well as considering that the church was gradually losing its authority and role in societal life in the Motherland, prioritized the regulation of relations between Diaspora-church-state. This primarily involved addressing the issues between the Church and the Diaspora, the Mother See of Holy Etchmiadzin, and the Patriarchal Sees, with a focus on enhancing the authority of the Armenian Apostolic Church in the Diaspora.

Therefore, in 1934 the re-establishment of the position of patriarchal nuncio in the Diaspora, the involvement of the patriarchal sees of Jerusalem, Constantinople and the Catholicosate of Cilicia in the development of the constitution of the Armenian Apostolic Church, the grand celebration of the translation of the Bible and the 1500-year anniversary of the beginning of Armenian literature in the Diaspora, were not accidental.

As a result, Catholicos Khoren I Muradbekyan not only managed to establish warm fraternal relations between the Mother See and patriarchal sees, but also firmly linked the worldwide Armenians and the three patriarchal sees with the Motherland and Holy Etchmiadzin.

The presented article has not only scientific, but also practical significance. One of the pressing issues facing the Armenian Apostolic Church at this stage is again the regulation of the relations between the Diaspora, the church and the state, including the Mother See of Holy Etchmiadzin and the patriarchal sees.

Therefore, the study and research of the past experience will provide an opportunity not only for the development of relevant guidelines aimed at the settlement of the problems mentioned above, but also for the formation of capacities to face the existing political, social and religious challenges.

Keywords: *Khoren Muradbekyan, patriarchal see, Armenian Patriarchate of Jerusalem, Catholicosate of Cilicia, catholicos, chrism, relations, Diaspora, Motherland.*

ВЗАИМООТНОШЕНИЯ ПЕРВОПРЕСТОЛА И ПАТРИАРШИХ ПРЕСТОЛОВ В ГОДЫ ПАТРИАРШЕСТВА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН ХОРЕНА I

АЙРАПЕТЯН КАНАКАРА
Исполняющий обязанности заведующего
отделом обеспечения качества
Преподаватель ГГУ
электронная почта: q.hayrapetyan@gsu.am

Годы патриаршества Католикоса Всех Армян Армянской Апостольской Церкви Хорена А. Мурадбекяна (1932-1938) совпали с трудным периодом в истории армянского народа, когда сталинское насилие и антицерковная политика достигли своего апогея.

В этих обстоятельствах Католикос Хорен I, учитывая роль Армянской Апостольской Церкви в деле сохранения нации, а также принимая во внимание, что на Родине церковь мало-помалу теряет свой авторитет и роль в общественной жизни, выдвинул на первый план урегулирование взаимоотношений между Диаспорой – церковью - государством, преимущественно между церковью и Диаспорой, Первопрестольным Святым Эчмиадзином и Патриаршими престолами, проблему повышения авторитета Армянской Апостольской Церкви в Диаспоре.

Следовательно, было не случайным в 1934 году восстановление поста Патриаршего посланника в Диаспоре, вовлечение Патриарших престолов – Иерусалимского, Константинопольского патриархатов и Киликийского католикосата в разработку Конституции Армянской Апостольской церкви, торжественное празднование в Диаспоре 1500-летнего юбилея перевода Библии и формирования армянской литературы.

В результате Католикосу Хорену Мурадбекяну удалось не только установить теплые братские отношения между Первопрестолом и патриаршими престолами, но и прочно связать армянство всего мира и три престола с Родиной и Святым Эчмиадзином.

Представляемая статья имеет не только научное, но и практическое значение.

Одним из актуальных вопросов, стоящих перед армянской апостольской церковью на данном этапе, является урегулирование взаимоотношений Диаспора-церковь-государство, Первопрестольный Святой Эчмиадзин - Патриаршие престолы.

Следовательно, изучение и учёт прошлого опыта создаст возможность не только для разработки соответствующих ориентиров, направленных на урегулирование вышеуказанных проблем, но и для формирования возможностей противостояния существующим политическим, общественным и религиозным вызовам.

Ключевые слова: *Хорен Мурадбекян, патриарший престол, армянский патриархат Иерусалима, Киликийский католикосат, Католикос, миро, взаимоотношения, диаспора, Родина.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 02.09.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 16.09.2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: